



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» փետրվարի 2014թ.

N 27/Մ

ք. Ստեփանակերտ

2014 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ /ԷՔՍԵՏՈՆ/ ԱՎԱՐՏԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և  
գիտության նախարարի՝ 23.10.2012 թվականի N181-Ն հրամանով հաստատված՝  
«Դրսեկության ձևով /էքստեռն/ փոխադրական և ավարտական քննություններ  
կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 1 ենթակետի պահանջները՝

*հրամայում եմ.*

1. Դրսեկության ձևով /էքստեռն/ ավարտական քննություններ անցկացնելու  
իրավունքը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարության «Ստեփանակերտի  
Ա.Սախարովի անվան հ.8 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին:
2. Քննություններն անցկացնել փետրվարի 15-ից մարտի 15-ն ընկած  
ժամանակահատվածում՝ ըստ կից աշխատակարգի և ժամանակացույցի  
/Հավելված 1, Հավելված 2/:
3. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության  
աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը  
/պետ՝ Ռ.Մուսայելյան/
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:



Ս. ԱՍՐՅԱՆ

2014 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները՝ «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ օտար լեզու՝ դրսեկի ընտրությամբ), «Համաշխարհային պատմություն», բնագիտական՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի աշխարհագրություն» (դրսեկի ընտրությամբ) և «Ռուսաց լեզու, գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

1) գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Աշխարհագրություն», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները՝ «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ այլ օտար լեզու՝ դրսեկի ընտրությամբ), «Համաշխարհային պատմություն», բնագիտական՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» (դրսեկի ընտրությամբ), «Ռուսաց լեզու, գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

1) գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) <Հայոց եկեղեցու պատմություն>, <<Հասարակագիտություն>>, <<Ինֆորմատիկա>>, <<ՆՁՊ և անվտանգ կենսագործունեություն>> առարկաների քննությունները հանձնում են բանավոր: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն հավելված 2-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

1) Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկանները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

1) Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի՝

8-9 միավոր- 4    10-11 միավոր- 5    12-13 միավոր- 6    14-15 միավոր - 7  
16-17 միավոր-8    18-19 միավոր-9    20 միավոր-10

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

*Մանրություն:* Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են <<Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու>> կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:



**Հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման  
ժամանակացույց**

	Առարկա	քննության անցկացման եղանակը	Քննութ. անցկացման օրերը	
1.	Օտար լեզու- անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն	գրավոր	18.02.2014թ.	
2.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	20.02.2014թ.	
3.	Համաշխարհային պատմություն	գրավոր	21.02.2014թ.	
4.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	24.02.2014թ.	
5.	Հասարակագիտություն	բանավոր	26.02.2014թ.	
6.	Աշխարհագրություն	բանավոր	28.02.2014թ.	
7.	Ինֆորմատիկա	բանավոր	03.03.2014թ.	
8.	Ռուսաց լեզու, գրականություն /ռուսերենով ուսուցում ստացած ղրսեկների համար/	գրավոր	05.03.2014թ.	
9.	Բնագիտություն- ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	07.03.2014թ. 11.03.2014թ. 13.03.2014թ.	
10.	Տեխնոլոգիա	բանավոր	14.03.2014թ.	

**Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար քննությունների  
կազմակերպման ժամանակացույց**

	Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1.	Օտար լեզու- անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, կամ ռուսերեն	գրավոր	18.02.2014թ.
2.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	20.02.2014թ.
3.	Համաշխարհային պատմություն	գրավոր	21.02.2014թ.
4.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	24.02.2014թ.
5.	Հասարակագիտություն	բանավոր	26.02.2014թ.
6.	Ինֆորմատիկա	բանավոր	03.03.2014թ.
7.	Ռուսաց լեզու, գրականություն /ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար/	գրավոր	05.03.2014թ.
8.	Բնագիտություն - ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն	գրավոր	07.03.2014թ. 11.03.2014թ. 13.03.2014թ.